

# ԾՈՎԱՅՐԵՆՆԵՐԻ ԵՐԳԸ

ԲԵՅՑՐԼՆԻ (,,ՔՈՐՄԵՐ“-ԻՑ)

ԹՍՐԳՄ. Յ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑԻ

«Մթնակապոյց ովկիանի  
Զուրի վերայ ցնծագին,  
Նոյնչափ անհուն մեր մզքեր,  
Նոյնչափ ազար մեր հոգին.  
Հեռու, որչափ զեփիւուը  
Կարող լինի մեզ վարել,  
Հեռու, որչափ փրփուրը  
Կարող լինի թափառել—  
Դիտիր դու մեր պետութիւն,  
Եւ ճանաչիր դու մեր դուն»

«Մաւալը մեր աշխարհի  
Զունի բընաւ պարփակում.  
Մեր դրօշն է այն գայիսոն՝  
Ում հանդիպում է իշխում;  
Մերն է վիճակ անխաղաղ,  
Վարել վայրի մի կենցաղ,  
Մերն է անդուլ վասրակից,  
Մինչև ի գիրկն հանգստեան,  
Գովնել մի նոր ցնծութիւն  
Մէջը ամեն փոփոխման»

Ո՛հ, մվ կարող է պատմել.—  
 Ու դու, ըստրուկ ճոխակեաց,  
 Որի հոգին կը սոսկար  
     Զուրի վերաց լեռնացած.  
 Եւ ոչ դու, տէր սընապարծ  
     Քիմքիդ հաճոյ զեղսութեան,  
 Որին չէ քունը հանգիսր,  
     Վայելքն երբէք յուրեկան—  
 Ո՛հ, մվ կարող է, թէ ոչ  
     Նա՝ որ այս կեանքն է վարել,  
 Եւ որի սիրամ յաղթական  
     Սնհուն ծովի մէջ պարել—  
 Այն խենթ բաղիսիւնն երակի,  
     Այն ըզգացումն հրձւագին,  
 Որից պակում է սարսուռ  
     Անհեղք շաւզի ճամբորդին,  
 Նա՝ որ կարող է կռւին  
     Իսէր կռւի ձեռնարկել,  
 Եւ ինչ վրանդ է այլոց՝  
     Հաճոյքների փոխարկել.  
 Փնտուել սիրով այն՝ որից  
     Խորշում է մարդն անարի  
 Աւելի քան եռանդով,  
     Եւ ուր երկչոր տըկարի  
 Կորչում է ուշքը գլխից.  
     Նա զգալ միայն է կարող—  
 Ըզգալ մինչեւ խորքն ու խորշ  
     Կործքի ներքեւ ուռեցող,  
 Որ նոր իւր յոյսն է արթնում,  
     Եւ նոր ոգին սաւառնում:  
  
 Ի՞նչ վախ մահից, թէ մեզ հետ  
     Մեռնի նաև թշնամին.  
 Թէ ոչ թւում է միայն

Նա քան մեր քունը խորին:  
 Թող մահը գայ երբ ուզէ—  
 Կեանքի մենք կեանքն ենք վարում—  
 Երբ որ մարի նա, ի՞նչ հոգ  
 Հիւանդութեամբ թէ կռւում  
 Նա որ սոլում է ընդ միշտ  
 Փուած կեանքին անձնւեր,  
 Մահմին գամեած թող քարշ ուայ  
 Ախորի, ցաւի փարիներ.  
 Եարժէ թող զլուխն անկայուն,  
 Եւ շունչ առնէ դժւարին,  
 —Մերն է մարգի թարմութիւն  
 Եւ ոչ գենդի անկողին:  
 Մինչ շունչ առշունչ ինելլելով  
 Նա իւր հոգին փչում է,  
 Մէկ ոսպին նով—մէկ ցաւով  
 Մերն իւր բանալից թռչում է:  
 Գուցէ դիակը նորա  
 Պանծալ կարող կը լինի  
 Իւր նեղ ու պերճ անձաւով,  
 Իւր սափոլովն աճիւնի.  
 Գուցէ շիրիմը նորա  
 Ոսկելինով զարդարեն,  
 Նոքա, որոնց իր կեանքում  
 Նա զզելի էր արդէն.  
 Մերն են թափւած արցունքներ —  
 Անկեղծ թէկ մի քանի—  
 Երբ պատանում է թաղում  
 Մերոնց ալիքն ովկիանի  
 Մերն է վիշտն այն սիրալից  
 Խնջոյքի մէջ յաղթութեան,  
 Երբ որ պարզում է բաժակ  
 Ի յիշափակ մեր անւան.  
 Տապանագրի փոխարէն

Մերն է այն կարճ երկբառը,  
Երբ յաղթողներն ի վերջոց  
Բաժնում են ճոխ աւարը,  
Եւ հառաջում—քրդմութեամբ  
Պատրած ամեն մի երես—  
Ճնչպէս պիտի հրձւեր արդ՝  
Նա որ ընկաւ քաջի պէս: